«ՄԱՅՐԵՆԻԻ ՊԱՇՏՊԱՆ» ՇԱՐՔԻՑ

ՀԱՅԵՑԻ ՍԵՐՈՒՆԴ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼՈՒ ՏԵՍԼԱԿԱՆՈՎ

(ՀԱՅ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՆԳԻՍՏՆ ԱՆԱՊԱՅԻ «ՄՈՒՇ» ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՄԲԱՐՈՒՄ)

Սույն թվականի հունիսի 1-ից օգոստոսի 1-ը Անապա քաղաքի «ՄՈՒՇ» հայկական դպրոցի տնօրեն Կարինե Փիլոյանի ջանքերով, ՌԴ Կրասնոդարի երկրամասի, Ստավրոպոլի երկրամասի և Ռոստովի մարզի հայերենի խմբակների պատանիներն ու աղջիկներն՝ իրենց ուսուցիչների հետ, մասնակցեցին 4 փուլով իրականացվող «ՄՈՒՇ» ուսումնաճանաչողական ծրագրին, որը ներառում էր 7-օրյա ճամբարային առօրյա, հայկական միջավայր, հայոց լեզվի ուսուցում, ծովափնյա հանգիստ, հայկական երգ, պար, խաղեր, ճանաչողական այցելություններ Անապայի հայկական հետքերով:

Առաջին փուլին մասնակցեցին Ռուսաստանի հարավի ամենահին բնակավայրերից մեկի՝ Էդիսիա հայկական գյուղի հայերենի խմակների սաները (ուսուցչուհի՝ Կարինե Բաղդասարյան) և Պյատիգորսկ քաղաքի հայերեն սովորող երեխաները (ուսուցչուհի՝ Գոհար Առուստամյան):

Երկրորդ փուլի ճամբարականներն էին Ռոստովի մարզի Մեծ Սալա գյուղի հայերենի խմբակի աշակերտները (ուսուցչուհի՝ Անահիտ Հարությունյան) և Դոնի Ռոստովի հայերենի խմբակների սաները (ուսուցչուհիներ՝ Լուսինե Պետանյան, Ռուզաննա Կարապետյան):

Երրորդ փուլի մասնակիցները՝ Ռոստովի Սուրբ Խաչ եկեղեցուն կից հայկական կիրակնօրյա դպրոցի աշակերտներն էին (ուսուցչուհի՝ Արմինե Ղազարյան) և Ռոստովի հայկական համայնքին կից հայերենի խմբակի սաները (ուսուցչուհիներ՝ Արմինե Հովսեփյան, Ծովինար Սարգսյան):

Չորրորդ փուլին մասնակցում էին Ռոստովի հավելյալ կրթության կենտրոնի «Արեվիկ» հայերենի խմբակի աշակերտները (ուսուցչուհի՝ Արմինե Հովսեփյան):

Ուսումնաճանաչողական ճամբարի առօրյան իրենց ներկայությամբ և հետաքրքիր դասերով պատվեցին «Ռուսաստանի հայերի միություն» համառուսաստանյան ՀԿ Կրասնոդարի երկրամասային մասնաճյուղի կրթության բաժնի ղեկավար, մի շարք ուսումնական դասագրքերի հեղինակ Կարինե Եսայանը, Ռևսկայա ավանի «Արցախ» պարային համույթի գեղարվեստական ղեկավար Հռիփսիմե Բաբայանը, հայոց լեզվի ուսուցչուհի Արև Բալայանը, ուսումնական դասագրքերի հեղինակ Կարինե Կատանյանը, Անապա քաղաքի «Ալաշկերտ» պարի համույթը (գեղ. ղեկավար՝ Մելանյա Սարգսյան), Նովոռոսիսկ քաղաքի «Кусочек неба» թատերախումբը (գեղ. ղեկավար՝ Նարինե Մանուկյան):

ԱՆԱՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

Անապայում ճամբարականներիս օրը սկսվում էր հայկական խոհանոցի համեղ նախաճաշով: Նախճաշից հետո հայերենի դասն էր, որը վարում էր բազմավաստակ ուսուցչուհի Կարինե Փիլոյանը՝ իր մշակած մեթոդներով ու դասերով, որոնք տարիների աշխատանքի արդյունքում վերածվել են «Հայերենի քսան դաս» ուսումնական ձեռնարկին: Հայերենի դասերը մասնակիցներին գրավում էին թեթևությամբ, զուրկ էին ավելորդաբանություններից, չօգտագործվող գրքային բառերից ու արտահայտություններից: Տիկին Կարինե Փիլոյանը հայոց լեզվի քերականական կանոնները մատուցում էր մատչելի, հասարակ օրինակներով, իսկ առաջարկվող տեքստերը հակիրճ էին ու նպատակային:

Ճաշից հետո մեզ սպասում էր ծանոթությունը և զբոսանքը Անապայի հայկական հետքերով: Մեր առաջին կանգառը Կիրովի, 21 Վ, հասցեն էր, որտեղ գտնվում է Ն.Ա. Իսպիրյանի անվան հայկական ազգային մշակույթի կենտրոնը: Այդ ժամին այնտեղ էին համայնքի ղեկավար Ռուսլան Կազրամանյանը, երիտասարդներ:

– Ես իմ պատմական հայրենիքը համարում եմ Հայաստանը: Հայրս հայ է, մայրս՝ ռուս: Ես ծնվել եմ այստեղ: Իմ երակներով հայկական արյուն է հոսում: Մեր համայնքում զարգացնում ենք հայկական մշակույթը, սպորտը, զբաղվում ենք